ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

ԶԵԿՈՒՅՑ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ ՈՍՏԻԿԱՆ-ՔԱՂԱՔԱՑԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Զեկույցը պատրաստվել է 2010 թ. հունիսի 1-ից 2013 թ. մայիսի 31-ն ընկած ժամանակահատվածում իրականացված ուսումնասիրությունների հիման վրա

NORWEGIAN MINISTRY OF FOREIGN AFFAIRS

DEN NORSKE HELSINGFORSKOMITÉ

THE NORWEGIAN HELSINKI COMMITTEE

HELSINKI CITIZENS ASSEMBLY

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

ԶԵԿՈՒՅՑ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ ՈՍՏԻԿԱՆ-ՔԱՂԱՔԱՑԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Զեկույցը պատրաստվել է 2010 թ. հունիսի 1-ից 2013 թ. մայիսի 31-ն ընկած ժամանակահատվածում իրականացված ուսումնասիրությունների հիման վրա

NORWEGIAN MINISTRY OF FOREIGN AFFAIRS

DEN NORSKE HELSINGFORSKOMITÉ
THE NORWEGIAN HELSINKI COMMITTEE

HELSINKI CITIZENS ASSEMBLY
ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

Վանաձոր-2013 թ.

Զեկույցը պատրաստվել է «ՀՀ ոստիկանության բարեփոխումների ծրագրի» շրջանակներում: Ծրագիրն իրականացվել է Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի կողմից Նորվեգիայի հելսինկյան կոմիտեի ֆինանսական աջակցությամբ:

Զեկույցում հնչած կարծիքները հեղինակներինն են և հնարավոր է, որ չհամապատասխանեն ֆինանսավորող կազմակերպության տեսակետներին:

Հեղինակային խումբ՝
Արթուր Սաքունց՝ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի նախագահ
Օֆելյա Զալյան՝ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ծրագրերի համակարգող

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 4

Մարդու իրավունքների խախտումները խուզարկության, բերման ենթարկելու և ձերբակալելու ժամանակ 7

Բերման ենթարկելու ժամանակ 9

Խուզարկության ժամանակ 12

Ձերբակալության ժամանակ 14

Վերլուծության արդյունքում ստացված եզրահանգումներ 19

2011-2013 թթ. ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից տրամադրված իրավական աջակցության արդյունքում արձանագրված մարդու իրավունքների խախտման դեպքերը ոստիկան-քաղաքացի հարաբերություններում 20

Վատ վերաբերմունքի դեպքերը 20

Անօրինական խուզարկության դեպքեր 26

Ազատությունից ապօրինի զրկելու դեպքեր 31

Անձանց բերման ենթարկելու ընթացքում իրավունքների խախտման դեպքեր 36

Ներածություն

Մարդու իրավունքների տեսակետից առավել խոցելի բնագավառներից է հանդիսանում ոստիկանության հետ քաղաքացիների հարաբերությունները, որին իրենց զեկույցներում անդրադարձել են մի շարք միջազգային կազմակերպություններ: Մասնավորապես, ԱՄՆ Պետդեպարտամենտը[1], Human Rights Watch միջազգային իրավապաշտպան կազմակերպությունը[2], Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեն (ԽԿԿ)[3]:

2010-2013 թթ. ՀՔԱ Վանաձորի գրասենյակը իրականացրել է մարդու իրավունքների վիճակի ուսումնասիրություն ոստիկան-քաղաքացի հարաբերություններում: Կազմակերպության կողմից ուսումնասիրվել է, և՛ օրենսդրությունը, և՛ օրենսդրության կիրառումը: Ուսումնասիրությունների արդյունքում պատրաստվել են զեկույցներ, տեղեկանքներ, որոնցում վեր են հանվել մարդու իրավունքների խախտումների հանգեցնող պատճառները և ներկայացվել են դրանց լուծմանն ուղղված առաջարկություններ[4]:

Իմի բերելով մարդու իրավունքների խախտման դրսևորումները 2010-2013 թթ. կազմակերպությունը կարևոր ուշադրություն է դարձրել նաև ոստիկանության բարեփոխումների ծրագրերին:

Մասնավորապես, կազմակերպության կողմից իրականացվել է «ՀՀ ոստիկանության գործունեության ոլորտում 2010-2011 թթ. բարեփոխումների ծրագրի» իրականացման գնահատում[5]:

Ներկայացվող զեկույցում ամփոփված են ոստիկանության բաժիններ անձանց բերման ենթարկելու, անձնական և բնակարանի խուզարկության, ինչպես նաև ձերբակալության ընթացքում ոստիկանության աշխատակիցների կողմից մարդու իրավունքների խախտման վիճակը:

---

[1] ԱՄՆ Պետդեպարտամենտի զեկույցը 2012 թ. Հայաստանում մարդու իրավունքների վիճակի վերաբերյալ (ARMENIA 2012 HUMAN RIGHTS REPORT), http://www.state.gov/documents/organization/204468.pdf

[2] Human Rights Watch միջազգային իրավապաշտպան կազմակերպության զեկույցը Հայաստանում մարդու իրավունքների վիճակի վերաբերյալ, հունվար 2012 թ., http://www.hrw.org/sites/default/files/related_material/armenia_0.pdf
Human Rights Watch միջազգային իրավապաշտպան կազմակերպության տարեկան զեկույցը (World Report 2014) աշխարհում մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ, http://www.hrw.org/world-report/2014, http://hcav.am/events/human-rights-watch-ի-տարեկան-զեկույցը՝-հայաստանում-մ/

[3] Report to the Armenian Government on the visit to Armenia carried out by the European Committee for the Prevention of Torture and Inhuman or Degrading Treatment or Punishment (CPT) from 10 to 21 May 2010, http://www.cpt.coe.int/documents/arm/2011-24-inf-eng.pdf, http://www.cpt.coe.int/documents/arm/2011-24-inf-eng.htm

[4] ՀՔԱ Վանաձորի գրասենյակի զեկույցները, http://hcav.am/tag_publications/սեփական/

[5] «ՀՀ ոստիկանության գործունեության ոլորտում 2010-2011 թթ. բարեփոխումների ծրագրի իրականացման վերլուծություն», http://hcav.am/wp-content/uploads/2012/04/Զեկույց.pdf

Անդրադարձ է կատարվել ոստիկանության գործունեությունը կարգավորող օրենսդրական նորմերին, որոնք իրենց հերթին հանգեցնում են մարդու իրավունքների խախտումների:

Ոստիկանություն-քաղաքացի հարաբերություններում մարդու իրավունքների վիճակի ուսումնասիրությունն իրականացվել է վեց փաստաբանների կողմից՝ 2011-2013 թթ. ընթացքում փաստաբանական գործունեության ընթացքում արձանագրված տեղեկատվության ամփոփման միջոցով:

Փաստաբանների կողմից տեղեկատվությունը տրամադրվել է նախօրոք մշակված հարցաթերթիկների միջոցով: Նշված հարցաթերթիկները մշակվել են՝ ելնելով իրավապահ մարմինների գործունեությունը կարգավորող օրենսդրական նորմերի և դրանց կիրառման ընթացքում հնարավոր խախտումների բացահայտման տեսակետից:

Փաստաբանների կողմից ներկայացվել են ընդհանուր թվով 69 գործ:

ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության կողմից ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ 2010-2013 թթ. ժամանակահատվածի համար ներկայացված հաշվետվություններից կալանավորման, խուզարկության և ձերբակալված անձանց վերաբերյալ տվյալները ցույց են տալիս, որ չնայած այն հանգամանքին, որ նվազել են խուզարկություն կատարելու և կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ դատարան ներկայացվող միջնորդությունները, այնուամենայնիվ որպես կանոն շարունակվում է դատարանների կողմից նման միջնորդությունների բավարարման պրակտիկան:

Ինչպես երևում է աղյուսակ 1-ից խուզարկություն կատարելու վերաբերյալ միջնորդությունների ավելի քան 99%-ը բավարարվել են, իսկ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդություններից մոտ 3-4 %-ն է մերժվել:

Խուզարկություններ կատարելու և կալանքը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունների վիճակագրական տվյալները նույնպես վկայում են այն մասին, որ դատարանները չեն ապահովում արդար դատաքննություն:

Ոստիկան քաղաքացի հարաբերություններում մարդու իրավունքները առավել խոցելի են բերման ենթարկելիս:

					Աղյուսակ 1
N		**2010 թ.**	**2011 թ.**	**2012 թ.**	**2013 թ. (հունվար-մայիս)**
1.1	Կալանավորումը որպես խափանման միջոց կիառելու մասին ՀՀ դատարաններ ներկայացված միջնորդությունների քանակը	2851	2587	2224	1088
1.2	Դատարանների կողմից բավարարված միջնորդությունների քանակը	2764	2482	2150	1049
1.3	Դատարանների կողմից մերժված միջնորդությունների քանակը	87	105	74	39
2.1	Խուզարկություն կատարելու համար դատարաններ ներկայացված միջնորդությունների քանակը	3433	3391	2873	1566
2.2	Խուզարկություն կատարելու համար դատարաններ ներկայացված և դատարանների կողմից բավարարված միջնորդությունների քանակը	3411	3365	2856	1553
2.3	Խուզարկություն կատարելու համար դատարաններ ներկայացված և դատարանների կողմից մերժված միջնորդությունների քանակը	22	26	17	13
3	Ձերբակալված անձանց թվաքանակը	1637	1403	1228	562

Այսպիսով՝ պաշտոնական վիճակագրությունը նույնպես հիմք է տալիս պնդելու ոստիկանություն-քաղաքացի հարաբերություններում մարդու իրավունքների խախտումների հանգեցնող ռիսկերի առկայության և նրանց նկատմամբ ոչ պատշաճ դատական հսկողության մասին:

Մարդու իրավունքների խախտումները խուզարկության, բերման ենթարկելու և ձերբակալելու ժամանակ

Ոստիկանության աշխատակիցների և քաղաքացիների հարաբերություններում ոստիկանության կողմից ակտիվ գործողությունները կարելի է բաժանել 3 մեծ խմբի՝ բերման ենթարկել, խուզարկել և ձերբակալել:

Փաստաբանների կողմից կազմակերպությանը ներկայացված 69 գործերից խախտումներ արձանագրվել են 52 գործերով, որը կազմում է ներկայացված գործերի մոտ 75 %-ը: Նշված 52 գործերով արձանագրվել են թվով 177 խախտումներ՝ բերման ենթարկելու, խուզարկության և ձերբակալության ընթացքում (տե՛ս գծապատկեր 1 և աղյուսակ 2):

Ըստ այս դասակարգման նկատում ենք, որ առավել մեծ թվով խախտումներ կատարվում են բերման ենթարկելիս, այնուհետև ձերբակալության ընթացքում, իսկ առավել քիչ՝ խուզարկության ընթացքում (տե՛ս գծապատկեր 1):

Գծապատկեր 1. Մարդու Իրավունքների խախտումների բաշխումը բերման ենթարկելու, խուզարկության և ձերբակալության ընթացքում



		Աղյուսակ 2.
Մարդու իրավունքների խախտումների վիճակագրությունը բերման ենթարկելու, խուզարկության և ձերբակալության ժամանակ		
Խախտումների նկարագրությունը		*Խախտումների քանակը*
Բերման ենթարկելու ժամանակ		
1	Բերման ենթարկելու սահմանված կարգի խախտումներ	51
2	Հարցաքննության կարգի խախտումներ	28
4	Վատ վերաբերմունքի դեպքեր	2
3	Ճանաչման ներկայացնելու կարգի խախտումներ	1
5	Անմեղության կանխավարկածի խախտման դեպքեր	1
	Ընդամենը	**83**
Խուզարկության ժամանակ		
1	Խուզարկություն կատարելու կարգի խախտումներ	28
	Ընդամենը	**28**
Ձերբակալության ընթացքում		
1	Ձերբակալման կարգի խախտումներ	35
3	Կալանավորումը որպես խափանման միջոց կիրառման կարգի խախտումներ	9
2	Հարցաքննության կարգի խախտումներ	4
4	Վատ վերաբերմունքի դեպքեր	3
	Ընդամենը	**51**
Խախտումներ որոնք ըստ գործի նյութերի հնարավոր չէ ճշտել ըստ կատարման ժամկետի		
1	Հարցաքննության սահմանված կարգի խախտումներ	12
2	Վատ վերաբերմունքի դեպքեր	1
3	Մեղադրյալին իրավունքների մասին ծանուցելու կարգի խախտումներ	1
4	Պաշտպանության իրավունքի խախտումներ	1
	Ընդամենը	**15**
	Ընդհանուրը	**177**

Նկատենք, որ այն դեպքերում, երբ փաստաբան է ներգրավվել իրավապահ մարմինների աշխատակիցների հետ անձի շփման առաջին իսկ պահից, անձի իրավունքներն ու

ազատությունները, կամ չեն խախտվել, կամ քննչական գործողություններն ուղեկցվել են սակավաթիվ խախտումներով:

Միջին հաշվով մեկ գործի շրջանակում կարող ենք արձանագրել առնվազն 3 խախտում՝ բացառությամբ այն գործերի որոնցով փաստաբանը ներգրավված է եղել ի սկզբանե: Դիտարկված գործերից մեկով քննչական մարմնի կողմից թույլ տրված խախտումների քանակը հասել է 11-ի:

Բերման ենթարկելու ժամանակ

Բերման ենթարկելն առանց հարգելի պատճառի քննության չներկայացող կասկածյալին, մեղադրյալին, ամբաստանյալին, դատապարտյալին, վկային և տուժողին հարկադրաբար քրեական վարույթն իրականացնող մարմնին ներկայացնելն է՝ նրա նկատմամբ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված համապատասխան դատավարական գործողություններ կատարելու համար, որը կարող է զուգորդվել բերման ենթարկվող անձի իրավունքների և ազատությունների ժամանակավոր սահմանափակմամբ: Բերման ենթարկելը կատարվում է վարույթն իրականացնող հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի կամ դատարանի պատճառաբանված որոշման հիման վրա: Նշանակված ժամկետում կանչով ներկայանալուն խոչընդոտող հարգելի պատճառների առկայության մասին կասկածյալը, մեղադրյալը, ամբաստանյալը, դատապարտյալը, ինչպես նաև վկան և տուժողը պարտավոր են տեղյակ պահել իրենց կանչած մարմնին: Բերման ենթարկելու մասին որոշումը կատարում է հետաքննության մարմինը՝ օրենքով սահմանված կարգով: Այնուամենայնիվ՝ օրենսդիրը սահմանում է բացառություն կանոնից՝ մասնավորեցնելով, որ չի թույլատրվում բերման ենթարկել մինչև 14 տարեկան անչափահասներին, հղի կանանց և ծանր հիվանդությամբ տառապող անձանց, բացառությամբ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության կատարման մեջ կասկածվելու դեպքերի: Բերման չեն կարող ենթարկվել նաև օրենքով նախատեսված այլ անձինք:[6]

Գործող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով հստակ սահմանված չեն բերման ենթարկված անձի իրավունքները և պարտականությունները, որը հանգեցնում է նրա իրավունքների խախտմանը:

Ըստ օրենսդրության գործողությունները և որոշումները, որոնք իրավապահ մարմինը պետք է իրականացնի և ընդունի անձին բերման ենթարկելու ընթացքում հետևյալն են՝

- կայացնել բերման ենթարկելու մասին որոշում,
- բերման ենթարկված անձին ներկայացնել բերման ենթարկելու հիմքերը և իրազեկել անձի կարգավիճակը,
- ծանուցել անձին, թե որ գործի շրջանակներում է բերման ենթարկվում:

[6] ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հոդված 153

Հատկանշական է, որ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի մեջ «բերման ենթարկել» հասկացությունը հանված է: Ենթադրաբար, այն արվել է բազմաթիվ չարաշահումներից և խախտումներից խուսափելու նպատակով, քանի որ ինչպես ցույց են տալիս նաև ՀՔԱ Վանաձորի գրասենյակի հետազոտությունները և դիտարկումները (տե՛ս աղյուսակ 3), անձի իրավունքների և ազատությունների առավել մեծածավալ խախտումները թույլ են տրվում հենց բերման ենթարկելու ժամանակ, երբ անձից վերցվում են բացատրություններ, որոնց արդյունքում անձի դատավարական կարգավիճակը փոփոխվում է և նա դառնում է կասկածյալ:

Աղյուսակ 3-ից երևում է, որ բերման ենթարկելու ժամանակ մարդու իրավունքների խախտումների գերակշիռ մասը (83 խախտումներից 51-ի դեպքում) պայմանավորված են բերման ենթարկելու սահմանված կարգի խախտումներով:

	Աղյուսակ 3
Բերման ենթարկելու մասին համապատասխան որոշում չի կայացվել	14
Բերման ենթարկվողին չեն ներկայացրել գործը, որի շրջանակներում անձը բերման է ենթարկվել և չի ներկայացվել նրա դատավարական կարգավիճակը	8
Բերման ենթարկող ոստիկանները բերման ենթարկելու հիմք չեն ներկայացրել	8
Բերման ենթարկող ոստիկանները չեն ներկայացել և չեն ներկայացրել համապատասխան վկայական	7
Բերման ենթարկելու մասին արձանագրությունը չի համապատասխանում սահմանված կարգին	2
Բերման ենթարկելիս վատ վերաբերմունք է եղել	2
Բերման ենթարկելու ընթացքում հարցեր են տվել գործի վերաբերյալ	1
Բերման ենթարկվողի հասցեին վիրավորական արտահայտություններ են արվել	1
Անձը հնարավորություն չի ունեցել նշում կատարել բերման ենթարկելու արձանագրության մեջ	1
Բերման ենթարկվելուց հետո մեկ օր անց որպես կալանավոր տեղափոխվել է ՔԿՀ	1
Ընդամենը	51

Դիտարկենք անձին բերման ենթարկելու ժամանակ թույլ տրված խախտումների վիճակագրությունը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 153-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ բերման ենթարկելը կատարվում է վարույթն իրականացնող հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի կամ դատարանի պատճառաբանված որոշման հիման վրա:

Գործնականում, ինչպես դա երևում է աղյուսակ 3-ից, բերման ենթարկելու ժամանակ առավել մեծ թվով խախտումները պայմանավորված են նշված որոշման չկայացմամբ:

Ինչպես երևում է փաստաբանների ներկայացրած տվյալների վերլուծությունից, անձի բնակարանի կամ անձնական խուզարկության արդյունքում արգելված առարկայի կամ նյութի հայտնաբերումից հետո անձը բերման է ենթարկվել ոստիկանություն՝ առանց բերման ենթարկելու որոշման կայացման (դիտարկված 51 դեպքերից 14 -ով):

Բերման ենթարկելու ընթացքում տարածված խախտումներ են հանդիսանում նաև բերման ենթարկելու հիմքերը չներկայացնելը (դիտարկված յուրաքանչյուր 6 դեպքից մեկով) և բերման ենթարկող ոստիկանի բերման ենթարկվող քաղաքացուն չներկայանալը (դիտարկված յուրաքանչյուր 7 դեպքից մեկով):

Անձի ազատությունը սահմանափակվում է ոստիկանության աշխատակցի կողմից նրան բերման ենթակելու պահից: Ինչպես երևում է աղյուսակ 3-ից յուրաքանչյուր 6 դեպքից մեկով բերման ենթարկված անձը չի տեղեկացվել, թե որ գործի շրջանակներում և ինչ կարգավիճակում է ինքը բերման ենթարկվում:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի՝ ազատությունից զրկված յուրաքանչյուր անձ իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվում է պատճառների, իսկ քրեական մեղադրանք ներկայացվելու դեպքում՝ նաև մեղադրանքի մասին:

ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ «Ազատությունից զրկված յուրաքանչյուր անձ իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվում է պատճառների, իսկ քրեական մեղադրանք ներկայացվելու դեպքում՝ նաև մեղադրանքի մասին: Ազատությունից զրկված յուրաքանչյուր անձ իրավունք ունի այդ մասին անհապաղ տեղեկացնելու իր կողմից ընտրված անձին»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Ոչ ոք չի կարող քրեական գործով ձերբակալվել, խուզարկվել, կալանավորվել, դատապարտվել, ենթարկվել բերման և դատավարական հարկադրանքի այլ միջոցների, ինչպես նաև իրավունքների ու ազատությունների այլ սահմանափակումների այլ կերպ, քան օրենքով սահմանված հիմքերով և կարգով»:

Համաձայն ՀՀ Ոստիկանության մասին ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի՝ ոստիկանության ծառայողները մարդու իրավունքների ու ազատությունների սահմանափակման ցանկացած դեպքում անմիջապես պարտավոր են նրա համար մատչելի և հասկանալի լեզվով ներկայացնել սահմանափակման հիմքերն ու պատճառները, ծանոթացնել և բացատրել դրանցից բխող իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև աջակցել իրավունքների իրացմանը:

ՀՀ կառավարության 14.06.2007թ. «Մարդու իրավունքների ու ազատությունների սահմանափակումից բխող ծանուցման ենթակա իրավունքների ցանկը և ծանուցման կարգը հաստատելու մասին» N 818 որոշման N 1 հավելվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ մարդու ազատությունները սահմանափակելիս մարդն իրավունք ունի՝ սահմանափակման պահից իմանալու իր ազատության սահմանափակման պատճառները, հիմքերը, … »:

Հարկ է նշել, որ բերման ենթարկված անձը, որը պատշաճ չի իրազեկվում իր իրավունքների և կարգավիճակի վերաբերյալ, գտնվում է անորոշության մեջ, որի հետևանքով զրկվում է իր իրավունքները արդյունավետ պաշտպանելու և կարգավիճակից բխող երաշխիքներից օգտվելու իրավունքից:

Ելնելով ուսումնասիրության արդյունքներից՝ կարող ենք արձանագրել, որ ոստիկանության կողմից քաղաքացուն բերման ենթարկելու գործընթացը ուղեկցվում է մարդու իրավունքների այնպիսի խախտումներով, որոնց հետևանքով անձը զրկվում է իր իրավունքների պաշտպանության հնարավորությունից՝ դառնալով իրավազուրկ:

Խուզարկության ժամանակ

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 225 հոդվածի՝ բնակարանի խուզարկությունը կարող է կատարվել միայն դատարանի որոշմամբ՝ անկախ հիմքերի առկայությունից:

Կազմակերպության կողմից իրականացված ուսումնասիրության ընթացքում խուզարկության ժամանակ թույլ տրված խախտումների տեսակները ներկայացված են աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4	
Անձը հնարավորություն չի ունեցել ծանոթանալ խուզարկության վերաբերյալ դատարանի որոշմանը	7
Անձին չի բացատրվել, թե ինչ կարգով կարող է բողոքարկել խուզարկություն իրականացնելու մասին որոշումը	4
Խուզարկությանը մասնակցող ընթերականերին չեն բացատրվել իրենց իրավունքները	3
Խուզարկության արձանագրությունը պատշաճ չի կազմված	3
Անձին չի բացատրվել, թե որտեղից և ինչ կարգով կարող է ստանալ խուզարկություն անցկացնելու վերաբերյալ դատարանի որոշման պատճենը	3
Ոստիկանության աշխատակիցները իրենց հետ բերել են ընթերականեր	2
Անձին հնարավորություն չի ընձեռնվել դիտողությունները ներկայացնել խուզարկություն իրականացնելու մասին արձանագրության մեջ	2
Խուզարկության ընթացքում վնասվել են իրեր կամ առարկաներ	1
Խուզարկություն է կատարվել առանց դատարանի որոշման	1
Խուզարկությունից առաջ այդ վայրում չի դադարեցվել ելքը և մուտքը	1
Հայտնաբերված նյութերը ոչ պատշաճ են փաթեթավորվել ու արձանագրվել	1
Ընդամենը	28

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 228 հոդվածի 2-րդ մասին համաձայն՝ խուզարկություն կատարելուց առաջ քննիչը պարտավոր է անձին, որի մոտ կատարվում է խուզարկություն, ծանոթացնել դատարանի որոշմանը: Այդ մասին նրանից վերցվում է ստորագրություն:

Ինչպես երևում է աղյուսակ 4-ից, յուրաքանչյուր 4 խախտումից մեկի դեպքում անձին չեն ծանոթացրել դատարանի որոշմանը: Ավելին, չեն բացատրել, թե որտեղից կամ ինչպես կարող է ստանալ դատարանի որոշման պատճենը (թվով 3 դեպքերում): Յուրաքանչյուր 7 դեպքից մեկում անձին չի բացատրվել խուզարկություն իրականացնելու մասին որոշման բողոքարկման կարգը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 277 հոդվածի 1-ին կետի համաձայն՝ խուզարկությունը և առգրավումը կատարվում է ընթերակաների մասնակցությամբ: Ի դեպ, ընթերակայի քննվող քրեական գործով շահագրգռված չլինելու հանգամանքը կարևոր նախապայման է քննության օբյեկտիվության ապահովման տեսակետից: Ըստ ուսումնասիրված նյութերի՝ որոշ դեպքերում խուզարկություն իրականացնող ոստիկանները ընթերականերին իրենց հետ են բերել:

Պրակտիկայի դիտարկումը ցույց է տվել, որ ոստիկանությունն ունի իր այսպես կոչված «հաստիքային» ընթերակաները, ովքեր տարբեր քրեական գործերով ներգրավվում են որպես ընթերականեր, քննչական գործողության իրականացման վայր են ժամանում ոստիկանության հետ ու ստորագրում ոստիկանության կողմից կազմված ցանկացած փաստաթուղթ: Նման պրակտիկայի հետևանքով ոստիկանության աշխատակիցների կողմից «սովորական» է դառնում ընթերականերին իրենց իրավունքներին չծանոթացնելը, որն արձանագրվել է նաև կազմակերպության կողմից իրականացված ուսումնասիրության արդյունքում:

Խուզարկության ընթացքում անձի իրավունքների պաշտպանության տեսակետից կարևոր նշանակություն ունի խուզարկության արձանագրության կազմումը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետը սահմանում է, որ խուզարկության արձանագրությունում նշվում են դատավարական գործողության իրականացման վայրը, օրը, ամիսը, տարեթիվը, սկսելու և ավարտելու ժամանակը՝ րոպեի ճշտությամբ: Նույն հոդվածի 4-րդ մասն ամրագրում է, որ «Դատավարական գործողությունները արձանագրություններում նկարագրվում են այն հաջորդականությամբ, որով իրականում տեղի են ունեցել: Արձանագրությունում նշվում են դրանց կատարման ընթացքում ձեռք բերված և գործի համար նշանակություն ունեցող հանգամանքները, շարադրվում են դատավարական գործողության մասնակիցների հայտարարությունները»: Օրենսգրքի 29-րդ հոդվածի 8-րդ կետի համաձայն՝ «Արձանագրությունը պետք է պարունակի նաև գրառումներ դատավարական գործողության մասնակիցներին իրենց իրավունքներն ու պարտականությունները բացատրելու, պարտականությունները չկատարելու հետևանքները պարզաբանելու, դատավարական գործողության իրականացման ընդհանուր կարգը բացատրելու մասին, ինչը հավաստվում է դատավարական գործողության մասնակիցների ստորագրությամբ»:

Մեր կողմից իրականացված ուսումնասիրության տվյալները վկայում են այն մասին, որ որպես կանոն արձանագրությունները կազմվում են մի շարք խախտումներով, որոնցից առավել տարածվածներն են՝

- անձի իրավունքներն ու պարտականությունները բացատրելու մասին գրառման բացակայությունը,
- խուզարկության իրականացման ոչ մանրամասն նկարագրման բացակայությունը,
- խուզարկության արդյունքների ոչ մանրամասն նկարագրման բացակայությունը,
- արձանագրության մեջ անձի կողմից դիտողություններ ներկայացնելու իրավունքից զրկելը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 230-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Ամբողջ վերցվածի մասին պետք է նշվի քննչական գործողության արձանագրության մեջ՝ ճշգրիտ նշելով դրանց քանակը, չափը, քաշը, անհատական հատկանիշները և այլ առանձնահատկությունները»:

Փաստաբանների կողմից առանձնացվել են հատկապես թմրամիջոցներ օգտագործող անձանց անձնական և բնակարանի խուզարկության գործերը, երբ խուզարկության արդյունքում հայտնաբերված նյութերն ու առարկաները համապատասխան կերպ չեն նկարագրվել և ներկայացվել արձանագրության մեջ:

Այսպիսով՝ ոստիկանության աշխատակիցների կողմից խուզարկություն գործառույթի իրականացման ընթացքում մարդու իրավունքների խախտումների պատճառ է հանդիսանում ոչ միայն օրենսդրությամբ սահմանված նորմերի խախտումը, այլև օրենսդրության որոշ նորմերի ոչ միանշանակ ձևակեպումը: Մասնավորապես՝ ընթերակաների ներգրավումը իրավապահ մարմինների հայեցողությամբ, խուզարկության թույլտվության վերաբերյալ դատարանի որոշման չտրամադրելը անձին:

Ձերբակալության ժամանակ

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 131[1] հոդվածի 1-ին մասի՝ հանցանք կատարելու մեջ կասկածվող անձին հետաքննության մարմին, քննիչի կամ դատախազի մոտ բերելուց հետո՝ երեք ժամվա ընթացքում, կազմվում է կասկածյալին ձերբակալելու մասին արձանագրություն, որի պատճենը ստորագրությամբ տրվում է ձերբակալված անձին: Ձերբակալման մասին արձանագրությունում նշվում է կասկածյալի պաշտպանության, ինչպես նաև քրեական դատավարության օրենսգրքի 63-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները պարզաբանելու մասին: Իսկ նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն արձանագրությունում նշվում են այն կազմելու ժամանակը (օրը, ամիսը, տարեթիվը, ժամը, րոպեն), ձերբակալման ժամանակը, վայրը, հիմքը (հիմքերը) և նպատակը, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի այն հոդվածը, որով նախատեսված հանցանքի կատարման մեջ կասկածվում է ձերբակալվածը, նրա անձնական խուզարկության արդյունքները և այլ հանգամանքներ, ինչպես նաև ձերբակալվածի հայտարարություններն ու միջնորդությունները:

Ձերբակալության ընթացքում խախտումների վերաբերյալ տվյալները ներկայացված են աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 5	
Ձերբակալումը կատարվել է առանց համապատասխան որոշման	7
Ձերբակալման արձանագրությունը չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին	7
Ձերբակալվածին պաշտպանության իրավունք չի տրվել	5
Ձերբակալման հիմքերը չեն ներկայացվել	4
Ձերբակալման արձանագրության և որոշման պատճենը անձին չի տրամադրվել	3
Ձերբակալման ժամն ու արձանագրության մեջ նշված ժամը տարբերվել են	3
Ձերբակալվածին հնարավորություն չի տրվել իր գտնվելու վայրի և հիմքերի մասին տեղեկացնել հարազատներին	3
Ձերբակալվածը իր իրավունքների մասին չի ծանուցվել	3
Վատ վերաբերմունքի դեպքեր	3
Ընդամենը	38

Ինչպես երևում է աղյուսակից յուրաքանչյուր 5 ձերբակալությունից 1-ի դեպքում անձի ձերբակալումը կատարվել է առանց համապատասխան որոշման: Նույնքան դեպքերում ձերբակալման վերաբերյալ արձանագրությունը չի համապատասխանել օրենքով սահմանված պահանջներին: Միայն 9 դեպքից մեկում է, որ փաստաբանների կողմից արձանագրվել է ձերբակալվող անձին ձերբակալման հիմքերի չներկայացման մասին: Իմի բերելով նշված տվյալները՝ կարելի է եզրակացնել, որ ձերբակալության յուրաքանչյուր 2 դեպքից մեկում, ըստ ուսումնասիրության տվյալների, ոստիկանության աշխատակիցները պատշաճ հիմքեր չեն ունեցել անձին ձերբակալելու համար:

Հաշվի առնելով ձերբակալության ժամանակ այլ բնույթի խախտումները՝ մասնավորապես՝

- ձերբակալվածին պաշտպանության իրավունք չի ընձեռվել (յուրաքանչյուր 7 խախտումից մեկը),
- ձերբակալվածը իր իրավունքների մասին չի ծանուցվել,
- չի տրամադրվել ձերբակալության արձանագրության և որոշման պատճենը,
- ձերբակալվածի հարազատները չեն տեղեկացվել նրա գտնվելու վայրի և ձերբակալման հիմքերի մասին,

կարող ենք արձանագրել, որ ձերբակալված անձը զրկված է արդյունավետ պաշտպանության բոլոր հնարավորություններից:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետի համաձայն՝ արգելանքի վերցնելուց հետո անմիջապես, բայց ոչ ուշ, քան 12 ժամվա ընթացքում, քրեական վարույթն իրականացնող մարմնի միջոցով մերձավոր ազգականներին, իսկ զինծառայող լինելու դեպքում նաև զինվորական մասի հրամանատարությանը,

հեռախոսակապի կամ հնարավոր այլ միջոցով տեղյակ պահելու արգելանքի տակ պահելու իր տեղի և հիմքերի մասին:

Փաստաբանների կողմից նկարագրված գործերում ներկայացվում են այն իրավիճակները, երբ անձը հեռախոսազանգով կանչվում է ոստիկանություն առանց պատճառի մատնանշման կամ իր բնակության կամ գտնվելու վայրից ոստիկանության աշխատակիցների կողմից անձին ոստիկանության որևէ բաժին տանելը, որից հետո հարազատները տեղեկություն չունենալով իրենց մերձավորի գտնվելու վայրի մասին նախաձեռնում են փնտրողական աշխատանքներ: Սակավաթիվ չեն այն դեպքերը, երբ ոստիկանության աշխատակիցները մուտք են գործում բնակարան քաղաքացիական հագուստով և առանց վկայականների ներկայացման: Հատուկ անհրաժեշտ է ընդգծել այնպիսի դեպքեր, երբ մերձավորները ոստիկանությունից տեղեկացել են, որ իրենց կողմից փնտրվող անձը չի գտնվում ոստիկանությունում, սակայն ժամեր անց վերջինս «գտնվել է» հենց այդ նույն ոստիկանության բաժնում/բաժանմունքում:

Ուսումնասիրության տվյալները ցույց են տալիս, որ էական տարբերություններ կան ձերբակալման փաստացի ժամի և ձերբակալման արձանագրության մեջ նշված ժամի միջև, այսինքն՝ ձերբակալության արձանագրության մեջ տեղի ունի ձերբակալության ժամի կեղծում:

ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ եթե ձերբակալված անձը ձերբակալման պահից 72 ժամվա ընթացքում դատարանի որոշմամբ չի կալանավորվում, ապա նա ենթակա է անհապաղ ազատ արձակման:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն «…ձերբակալումը չի կարող տևել արգելանքի վերցնելու պահից 72 ժամից ավելի»: Նույնական ձևակերպում է ամրագրված նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 129-րդ հոդվածի 3-րդ մասում:

Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գործնականում փաստացի ձերբակալման ժամկետը գերազանցում է օրենքով թույլատրելի առավելագույն 72 ժամը: Այս խախտման հետևանքով անձը, փաստացի ձերբակալության մեջ գտնվելով 72 ժամից ավելի, զրկվում է իրավական պաշտպանության հնարավորությունից, որը հնարավորություն է տալիս ոստիկանության աշխատակիցներին օրենսդրության նորմերի խախտմամբ անձի նկատմամբ կատարել ապօրինի գործողություններ, կորզել ցուցմունքներ հանցագործության հիմնավորման համար:

Այսպիսով՝ ձերբակալության ժամանակ ոստիկանության աշխատակիցների կողմից մարդու իրավունքների խախտումները միանշանակ պայմանավորված են օրենսդրությամբ սահմանված ձերբակալված անձի իրավունքների խախտումներով և ոստիկանության աշխատակիցների կողմից ոստիկանության գործառույթները կարգավորող նորմերի չպահպանմամբ:

Մարդու իրավունքների խախտումներ, որոնք ընդհանրական են բերման ենթարկելու, խուզարկության և ձերբակալության ընթացքում

Բերման ենթարկելու, խուզարկության և ձերբակալության ընթացքում ոստիկանության աշխատակիցների կողմից թույլ են տրվում մարդու իրավունքների խախտումներ, որոնք պայմանավորված չեն նշված գործողությունների իրականացման ընթացակարգերի խախտմամբ:

Ինչպես երևում է աղյուսակ 2-ից, բերման ենթարկելու ժամանակ, բացի բերման ենթարկելու սահմանված կարգի խախտումներից, մեծ թիվ են կազմում հարցաքննության կարգի խախտումները՝ յուրաքանչյուր 3 խախտումից մեկը: Նմանապես հարցաքննության կարգի խախտումներ են արձանագրվել նաև ձերբակալության ընթացքում:

Ուսումնասիրության ընթացքում բացահայտվել են խախտումներ, որոնց կատարման ժամկետը ըստ գործի նյութերի հնարավոր չի եղել ճշտել: (Տե՛ս աղյուսակ 2): Նշված խախտումների թվում գերակշիռ մասը վերստին հանդիսանում են հարցաքննության կարգի խախտումները /15 խախտումից 12-ը/:

Ուսումնասիրության ընթացքում արձանագրված բոլոր 177 խախտումներից 44-ը պայմանավորված են հարցաքննության կարգի խախտումներով (յուրաքանչյուր 4 խախտումից 1-ը):

Վատ վերաբերմունքի դեպքեր արձանագրվել են, թե՛ բերման ենթարկելու, թե՛ ձերբակալության ընթացքում:

Առաջին հայացքից արձանագրված վատ վերաբերմունքի դեպքերը բավականին քիչ են՝ 177-ից 6 դեպք: Իրականում քաղաքացիները որպես կանոն թաքցնում են վատ վերաբերմունքի դեպքերը և չեն հայտնում դրանց մասին: Սակայն ընթացակարգային խախտումների մեծ ծավալը, հատկապես ձերբակալության ընթացքում, նպաստող գործոններ են և հիմք են հանդիսանում պնդելու վատ վերաբերմունքի դեպքերի առավել մեծ տարածվածության մասին: Հետևաբար կարելի է պնդել, որ վատ վերաբերմունքի դեպքերը, թե՛ բերման ենթարկելիս, թե՛ ձերբակալության ընթացքում ունեն մեծ տարածում:

Առանձին ուշադրություն պետք է դարձնել կալանավորումը որպես խափանման միջոց կարգի կիրառման խախտումներին, որը կապված է ձերբակալված անձանց նկատմամբ քրեական գործի հարուցման հետ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն խափանման միջոցը կիրառվում է դատարանի, դատախազի, քննիչի կամ հետաքննության մարմնի որոշմամբ: Խափանման միջոց կիրառելու մասին քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշումը պետք է լինի պատճառաբանված, բովանդակի մեղադրյալին կամ կասկածյալին վերագրվող հանցագործության մասին նշումներ և համապատասխան խափանման միջոց ընտրելու անհրաժեշտության մասին հիմնավորում:

Հետազոտման արդյունքում նկարագրվել են մի շարք գործեր, երբ քննիչը կալանավորման միջնորդության մեջ ուղղակի նշել է, որ «Նկատի ունենալով այն հանգամանքը, որ տվյալ անձի կատարած հանցագործությունը (օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258 հոդվածի

4-րդ մաս) նախատեսում է ազատազրկման ձևով պատիժ, որի առավելագույն ժամկետը 1 տարուց ավելի է, բավարար հիմքեր կան ենթադրելու, որ մնալով ազատության մեջ նա կարող է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից, խոչընդոտել գործի քննությանը կամ կատարել քրեական օրենքով արգելված այլ կամ նմանատիպ արարք, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության համապատասխան հոդվածների պահանջով՝ որոշեցի միջնորդություն հարուցել համապատասխան դատարան քրեական գործով մեղադրյալ՝ [Գ.Ս.]-ի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին»:

Այսինքն՝ քննիչի կողմից ուղղակի՝ առանց որևէ հիմնավորման, մեջբերում են արվում օրենսդրության ձևակերպումները՝ առանց դրանք կոնկրետացնելու: Առավել մտահոգիչ է համարվում այն հանգամանքը, որ դատարանները նման միջնորդությունները «բավարար հիմնավորված և պատճառաբանված» համարելով՝ բավարարում են դրանք:

Վերլուծության արդյունքում ստացված եզրահանգումներ

1. Ոստիկանություն-քաղաքացի անմիջական հարաբերությունը, որը տեղի ունի այսպես կոչված «բերման ենթարկելու» գործողության իրականացման ժամանակ, անհրաժեշտ է հստակ կարգավորել օրենսդրությամբ՝ ապահովելու համար մարդու իրավունքների ոչ միայն պաշտպանությունը, այլ նաև խախտումների կանխարգելմանն ուղղված վերահսկողության արդյունավետ մեխանիզմները: Առավել կարևոր է նաև բերման ենթարկելու գործողության ընթացքում խախտված իրավունքների փաստով արդյունավետ քննության իրականացումը և պատշաճ փոխհատուցման ապահովումը:

2. Խուզարկության գործառույթի իրականացումը իրավապահ մարմինների կողմից հանդիսանում է քաղաքացիների հետ անմիջական հարաբերման երկրորդ մեծ բնագավառը՝ բերման ենթարկելու գործառույթից հետո: Խուզարկության գործառույթի իրականացման պրակտիկան ցույց է տալիս, որ ցանկացած քրեական գործի շրջանակներում այն կարող է կիրառվել ցանկացած քաղաքացու բնակարանում՝ անկախ քրեական հանցագործությանը նրա մասնակցության փաստից, կամ կարգավիճակի առկայությունից՝ հիմնվելով այսպես կոչված օպերատիվ հետախուզական տվյալների վրա, որոնք էլ դատարանի կողմից առանց պատշաճ քննության առնելու հիմք են ընդունվում խուզարկության իրականացման վերաբերյալ միջնորդությունը բավարարելու որոշում կայացնելիս:

3. Ձերբակալության գործողության իրականացման ընթացքում ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտումների կանխարգելմանը կնպաստի մի կողմից անձի արժանապատվությունը նվաստացնող և նրա իրավունքների խախտման վերաբերյալ յուրաքանչյուր հաղորդման հիման վրա օբյեկտիվ, պատշաճ քննության իրականացումը և ձերբակալության վերաբերյալ դատարանի որոշումը անձին պարտադիր տրամադրումը, մյուս կողմից ձերբակալության որոշումների դեմ դատական բողոքարկման պրակտիկայի խրախուսումն ու զարգացումը:

4. Բերման ենթարկելու, խուզարկության և ձերբակալության գործառույթների վերաբերյալ տվյալների ամփոփումը բերում է այն համոզման, որ քաղաքացիների նկատմամբ վատ վերաբերմունքի դեպքերը լայնորեն տարածված են նշված գործողությունների իրականացման ժամանակ և պայմանավորված են մի կողմից մարդու իրավունքների պաշտպանության իրավական մեխանիզմների և նորմերի անհստակությամբ, մյուս կողմից ոստիկանության աշխատակիցների գործողությունների նկատմամբ պատշաճ և արդյունավետ վերահսկողության բացակայությամբ, հատկապես՝ դատական ատյանների կողմից:

2011-2013 թթ. ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից տրամադրված իրավական աջակցության արդյունքում արձանագրված մարդու իրավունքների խախտման դեպքերը ոստիկան-քաղաքացի հարաբերություններում

Վատ վերաբերմունքի դեպքերը

Գործ 1. 2011 թ.
Իրավունքի խախտման նկարագրությունը

Կազմակերպություն դիմած քաղաքացի Ա. Ս-ն հայտնել է, որ իրեն հեռախոսազանգով քննչական բաժին հարցաքննության է կանչել քննիչը, որի վարույթում է գտնվել ամուսնու դեմ հարուցված քրեական գործը: Քննիչը Ա. Ս-ն ներկայացրել է վկայի հարցաքննության արձանագրության նմուշը և մատնանշել այն տողերը, որտեղ պետք է ստորագրի Ա. Ս-ը: Ստորագրելուց հետո քննիչը սկսել է հարցեր տալ և օգտվելով նրա կաշկանդվածությունից՝ հարցերի մի մասի պատասխանները ինքն է թելադրել:
Ըստ Ա. Ս-ի՝ քննիչի կողմից ինքը ենթարկվել է հոգեբանական ճնշումների: Քննիչի կողմից Ա. Ս-ին չեն պարզաբանվել իր իրավունքները, մասնավորապես՝ մերձավոր ազգականի դեմ ցուցմունքներ տալու պարտականությունից ազատ լինելու իրավունքը:

Ձեռնարկված միջոցառումները

Կազմակերպության կողմից հանցագործության մասին հաղորդում է ներկայացվել ՀՀ հատուկ քննչական ծառայություն և ՀՀ գլխավոր դատախազություն: Ստացված պատասխանով դատախազությունից հայտնել են, որ քննիչի կողմից անձի իրավունքների խախտում թույլ չի տրվել: Քաղաքացին չի ցանկացել շարունակել գործը՝ մտածելով, որ բողոքարկելու դեպքում իր նկատմամբ ոստիկանության աշխատակիցների գործողությունները (վատ վերաբերմունքը) կարող է վատ հետևանքներ ունենալ ամուսնու համար: Իհարկե չի բացառվում նաև ոստիկանության աշխատակիցների միջամտությունը:

Գործ 2. 2011 թ.

Խախտման նկարագրությունը

Կազմակերպություն դիմած ՀՀ Լոռու մարզի Լեռնապատ համայնքի բնակիչ Ա. Մ-ն հայտնել է, որ քննիչի կողմից, առանց ծանուցագրի, կանչվել է Լոռու մարզի քննչական բաժին հարցաքննության: Հարցաքննության ներկայացած քաղաքացու նկատմամբ քննիչը վերաբերվել է անհարգալից, կոպիտ և խոսել է հայհոյանքներով, ինչպես նաև ենթարկվել է հոգեբանական ճնշումների:

Ըստ քաղաքացու՝ քննիչի նպատակն է եղել իրենից ցուցմունք վերցնել նույն գյուղի մեկ այլ բնակչի կողմից իր աշխատակիցներին վատ վերաբերվելու մասին:

Ձեռնարկված միջոցառումները

Ա. Մ.-ի իրավունքների պաշտպանության նպատակով կազմակերպության կողմից հանցագործության մասին հաղորդում է ներկայացվել ՀՀ Լոռու մարզի դատախազություն:

Կազմակերպության հանցագործության մասին հաղորդումն ուղարկվել է Ոստիկանության Լոռու մարզի քննչական բաժին, որով հանձնարարվել է կատարել ծառայողական քննություն: 2011 թ. հոկտեմբերի 6-ի գրությամբ Գուգարքի քննչական բաժանմունքի քննիչ Ա. Մաթևոսյանը հայտնել է, որ կազմակերպության դիմումում նշված հանգամանքները ստուգելու համար Գուգարքի քննչական բաժանմունքում նախապատրաստվել են նյութեր և

ոստիկանության Լոռու մարզային վարչության աշխատակիցների կողմից կատարվել է ծառայողական քննություն: Ռ. Հ.-ի գործողություններում օրինականության և կարգապահական խախտման հատկանիշներ չեն հայտնաբերվել:

Գործ 3. 2011 թ.

Խախտման նկարագրությունը

Կազմակերպություն դիմած Ջ. Հ-ի խնդիրը կայանում է նրանում, որ նա, առանց ծանուցագրի, հեռախոսազանգի միջոցով կանչվել է ոստիկանություն և ոստիկանության աշխատակից Ս. Այվազյանի կողմից ոստիկանությունում անհարգալից, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի, սպառնալիքների և հոգեբանական ճնշումների է ենթարկվել:

Ձեռնարկված միջոցառումներ

Կազմակերպության կողմից հանցագործության մասին հաղորդում է ներկայացվել ՀՀ հատուկ քննչական ծառայություն, ՀՀ գլխավոր դատախազություն և ՀՀ ոստիկանություն:

Կազմակերպության հաղորդմանն ի պատասխան ստացվել է գրություն, որով հայտնել են, որ ՀՀ ոստիկանության ներքին անվտանգության վարչությունում իրականացվել է ծառայողական քննություն, որի արդյունքում նկատողություն է հայտարարվել քաղաքացու իրավունքները խախտող ոստիկանության աշխատակցի նկատմամբ:

Գործ 4. 2012 թ.

Իրավունքի խախտման նկարագրությունը

Կազմակերպություն դիմած Գ. Փ-ի խնդիրը կայանում է նրանում, որ ինքը հանդիսացել է 53620 զորամասի ֆինանսական մասի պետական-գանձապահ: Զորամասում իրականացվել են ստուգումներ, որոնց ժամանակ թերություններ, ջնջումներ են հայտնաբերվել, որի արդյունքում մեղադրանք է առաջադրվել իրեն: Նախաքննության ընթացքում քննիչի կողմից թույլ են տրվել քրեական դատավարության օրենսգրքով սահմանված իրավունքների խախտումներ, մասնավորապես՝ հարցաքննությունը առանց ընդհատվելու տևել է մոտ 9 ժամ, ինչպես նաև խախտվել է իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը, հարցաքննության և առերես հարցաքննության ժամանակ հնչել են սպառնալիքներ և աժանապատվությունը նվաստացնող հայտարարություններ են արվել: Ցուցմունքներ ստանալու նպատակով քննիչի կողմից հոգեբանական ճնշումներ են գործադրվել Գ. Փ.-ի նկատմամբ:

Ձեռնարկված միջոցառումները և արդյունքները

Կազմակերպության կողմից հանցագործության մասին հաղորդում է ներկայացվել ՀՀ գլխավոր դատախազություն, ինչպես նաև դիմում է ուղարկվել հաղորդման հիման վրա կայացված քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը ստանալու նպատակով: Դատախազության կողմից քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում ստանալու փոխարեն ստացվել է գրություն, որում նկարագրված են Գ. Փ.-ի գործում եղած հանգամանքները: Այսինքն՝ դատախազությունը հաղորդման մեջ նշված փաստերին չի տվել իրավաբանական որակում, այլ փորձել է շրջանցել հաղորդմամբ նշված խախտումների պատասխանատուներին պատասխանատվության ենթարկելը: Կազմակերպության կողմից դիմում է ներկայացվել ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան: Դատարանը կայացրել է որոշում, որով

մերժել է կազմակերպության կողմից ներկայացված դիմումը, պատճառաբանությամբ, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից կայացվել է հիմնավոր և օրինական որոշում,, որ այն վերացնելու հիմքեր չկան: Ընդհանուր իրավասության դատարանի որոշման դեմ ներկայացվել է վերաքննիչ բողոք: Վերաքննիչ դատարանը կայացրել է վերաքննիչ բողոքը մերժելու մասին որոշում: Վերաքննիչ դատարանի որոշման դեմ ներկայացվել է վճռաբեկ բողոք: ՀՀ վճռաբեկ դատարանը կայացրել է վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշում:

Գործ 5. 2012 թ.

Իրավունքի խախտման նկարագրությունը

2012 թ. նոյեմբերի 19-ին իր իրավունքների պաշտպանության խնդրով կազմակերպություն է դիմել Ռ. Կ.-ն: Ռ.Կ-ի իրավունքների պաշտպանության խնդրով նոյեմբերի 21-ին կազմակերպություն է դիմել նաև վերջինիս կնոջ քույրը՝ Լ. Ք.-ն: Կազմակերպությանն ուղղված դիմումում հայտնվում է այն մասին, որ նշված գործի նախաքննության ընթացքում Ռ. Կ-ի նկատմամբ կիրառվել են բռնություններ, ճնշումներ: Վերջինս հայտնել է, որ 2012 թ. մարտի 7-ին՝ 8:30-ի սահմաններում, իրեն տարել են ոստիկանություն՝ որպես կասկածյալ: Սակայն Ռ. Կ.-ն հայտնել է, որ ինքը գողություն չի կատարել և պահանջել է տրամադրել պաշտպան: Ա. Նահապետյանը հայհոյել է, հարվածել և ստիպել է գրել, թե «ոնց ա եղել»: Հետո բերել են Ա. Կ-ին: Ռ. Կ.-ն կողքի սենյակից լսել է, թե ինչպես են գոռում Ա. Կ.-ի վրա և ասում «դե ասա»: Ա-ն կաղալով եկել է, նստել և սկսել գրել: Ռ. Կ.-ն իր դիմումում նշել է, որ «հենց ինչ-որ մի բան այնպես չէր գրում, հարվածում էին նրան»: Հետո սկսել են ցուցմունքներ թելադրել Ռ. Կ-ին՝ վիրավորելով, հարվածելով վերջինիս: Ընդ որում, այդ ընթացքում Ռ. Կ.-ն շարունակել է պաշտպան պահանջել, սակայն նրան թույլ չեն տվել զանգահարել, ինչպես նաև զուգարան գնալ: Ոստիկանության աշխատակիցների թելադրանքով ցուցմունքները գրելուց հետո Ռ. Կ.-ին բաց են թողել միայն երեկոյան ժամը 22:00-ի սահմաններում: Ռ. Կ-ի և Ա. Կ-ի առերես հարցաքննության ժամանակ Ա.Կ.-ն Ռ.Կ.-ին ասել է. «Գիտես՝ ոստիկանները ինչ ձև են ծեծում, քանի անգամ եմ ուզել գրածս փոխեմ, ծեծել են»: Երբ Ռ. Կ.-ն հարցրել է, թե ինչ է եղել ոտքին, Ա. Կ.-ն հայտնել է, որ «ծեծել են էն օրը, որ չէի գրում, դրա համար էլ քո անունն եմ տվել...»: Լ. Ք.-ն հայտնել է, որ երբ ոստիկաններն իր քրոջ ամուսնուն՝ Ռ. Կ.-ին, տարել են ոստիկանություն, ինքը գնացել է նրանց հետևից և ժամը 15:00-16:00-ի սահմաններում թույլ են տվել ուտելիք բարձրացնել փեսայի համար: Լ. Ք.-ն ոստիկանության շենքում հանդիպել է Ա. Կ.-ին՝ ծեծված ու կարմրած: Գործի դատական քննության ժամանակ Ա. Կ-ն դատարանին հայտնել է ոստիկանության աշխատակիցների կողմից իր նկատմամբ բռնություն, ճնշումներ գործադրելու փաստի մասին, սակայն դատարանը որևէ գործողություն չի կատարել, և արժանահավատ չի գնահատել դատարանում տրված ցուցմունքները:

Ձեռնարկված միջոցառումները

Կազմակերպության կողմից հանցագործության մասին հարցորդում է ուղարկվել ՀՀ գլխավոր դատախազ Ա. Հովսեփյանին՝ խնդրելով ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ հաղորդմամբ ներկայացված խախտումները բացահայտելու և դրանք թույլ տրված անձանց պատասխանատվության ենթարկելու, ինչպես նաև Ռ. Կ.-ի խախտված իրավունքները վերականգնելու ուղղությամբ:

ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Գ. Հովակիմյանը կայացրել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում: Որոշումը կազմակերպությունը ստացել է 2013 թ. հունվարի 22-ին: Քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման դեմ ներկայացվել է դիմում-բողոք ՀՀ գլխավոր դատախազություն ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչ Գ. Հովակիմյանի քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը վերացնելու պահանջի մասին: ՀՀ գլխավոր դատախազության դատախազ Հ. Հարությունյանի կողմից ստացվել է գրություն, ըստ որի ներկայացված դիմում-բողոքը մերժվել է: Կազմակերպության կողմից Գ. Հովակիմյանի քրեական գործի հարուցումը մերժելու մասին 2012 թ. Դեկտեմբերի 25-ի որոշումը բողոքարկվել է դատական կարգով: Սպառվել են հնարավոր բոլոր դատական ատյանները, սակայն որևէ արդյունքի կազմակերպությունը չի հասել խոշտանգման փաստը ճանաչելու ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներով: Մարդու իրավունքների եվրոպական դատարան դիմում չի ներկայացվել, քանի որ մտավախություն է եղել, որ չի հաղթահարվի ընդունելության շեմը:

Գործ 6. 2012 թ.

Իրավունքի խախտման նկարագրությունը

Իրենց իրավունքների պաշտպանության խնդրով 2012 թ. նոյեմբերի 3-ին կազմակերպություն են դիմել Ս. Զ.-ն, Շ. Զ.-ն և Ս. Ծ.-ն: Ըստ Ս. Զ.-ի՝ 2012 թ. նոյեմբերի 2-ին՝ առավոտյան ժամը 11:00-11:15-ի սահմաններում, թաղային Նահապետյանը այցելել է իրենց տուն և ասել, որ իրեն ճագարներ գողանալու համար տանում են Ոստիկանության Գուգարքի բաժին: Ըստ Ս. Զ.-ի՝ Ոստիկանության Գուգարքի բաժնի աշխատակից փոխգնդապետ Մանուչարյանը ծեծի է ենթարկել իրեն, ինչպես նաև անպատվել, վիրավորել: Երբ Ս. Զ.-ն նշել է, որ Մանուչարյանը պետք է պատասխան տա այդ խոսքերի համար, վերջինս կրկին հարվածել է Ս. Զ.-ի գլխին, «փիդրել» նրա մազերը: Ս. Զ.-ն առավոտյան ժամը 11:00-ի սահմաններից մինչև 19:00-ի սահմանները մնացել է ոստիկանության Գուգարքի բաժնում:

Ոստիկանության աշխատակիցները պնդել են, որ Ս. Զ.-ն 10-15 օր առաջ ճագարներ է գողացել: Ս. Զ.-ն ոստիկանության աշխատակիցներին հայտնել է, որ այդ ճագարները փոխանակել է Վանաձորի շուկայում՝ ընկույզի դիմաց: Սակայն ոստիկանության աշխատակիցները չեն հավատացել և շարունակել են ծեծել: Ծեծի ազդեցության տակ, չդիմանալով ցավին՝ Ս. Զ-ն ասել է՝ «ինչ ուզում եք կստորագրեմ»: Կազմակերպությանն ուղղված դիմումում վերջինս նշել է, որ փոխգնդապետ Մանուչարյանի մոտ իր կողմից գրված բացատրությունը սուտ է, չի համապատասխանում իրականությանը: Կազմակերպություն

դիմելու նույն օրը Ս.Զ.-ն հրաժարվել է կազմակերպությանն ուղղված իր դիմումից և խնդրել իր իրավունքների պաշտպանության համար ոչինչ չձեռնարկել:

Գործ 7. 2013 թ.

Իրավունքի խախտման նկարագրությունը

2013 թ. փետրվարի 13-ին Շենգավիթի ոստիկանության բաժանմունք բերման են ենթարկվել Ն. Ս.-ն, Ս.-ն և նրանց 3 ընկերները (Ն.Ս.-ն մյուսների անունները չի նշել): Ոստիկանության բաժնում Ն.Ս.-ի և Ս.-ի նկատմամբ կիրառվել է բռնություն՝ գլուխները խփել են պատին՝ ցուցմունքներ ստանալու նպատակով: Կազմակերպություն դիմած տղաների պատմելով իրենց նկատմամբ կիրառել են նաև էլեկտրաշոկ: Բռնության հետքեր չեն եղել, ոստիկանության աշխատակիցները աշխատել են պրոֆեսիոնալ: Բժշկական օգնության չեն դիմել, որովհետև վախեցել են: Միևնույն ժամանակ նրանք հրաժարվել են իրավունքների պաշտպանության մասին դիմումը տրամադրել կազմակերպությանը և խնդրել են, որպեսզի ոչ մի գործողություն չձեռնարկվի իրենց իրավունքների պաշտպանության ուղղությամբ, քանի որ վախենում են, որ իրենց նկատմամբ կարող են այլ անօրինական գործողություններ կիրառվել:

Տվյալ ոլորտը կարգավորող համապատասխան ներպետական օրենսդրությունը

ՀՀ Սահմանադրության 17-րդ հոդվածն ամրագրում է. «Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, ինչպես նաև անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Ձերբակալված, կալանավորված և ազատազրկված անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի և արժանապատվության հարգման իրավունք»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածն ամրագրում է անձի անձնական անձեռնմխելիության իրավունքը, այսպես՝ «Քրեական դատավարության ընթացքում ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, անօրինական ֆիզիկական կամ հոգեկան բռնության, այդ թվում՝ բժշկական դեղամիջոցների օգտագործմամբ, սովի, ուժասպառման, հիպնոսի, բժշկական օգնությունից զրկվելու, ինչպես նաև այլ դաժան վերաբերմունքի: Արգելվում է կասկածյալից, մեղադրյալից, ամբաստանյալից, տուժողից, վկայից և քրեական դատավարությանը մասնակցող այլ անձանցից ցուցմունքներ կորզել բռնության, սպառնալիքի, խաբեության, նրանց իրավունքների ոտնահարման, ինչպես նաև այլ անօրինական գործողությունների միջոցով»:

Սահմանադրության 3-րդ հոդվածի համաձայն՝ «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են», իսկ 14-րդ հոդվածի համաձայն՝ «Մարդու արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների ու ազատությունների անքակտելի հիմք, հարգվում և պաշտպանվում է պետության կողմից»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝«Անձի իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը հարգելը պարտադիր է քրեական դատավարությանը մասնակցող բոլոր մարմինների և անձանց համար»: Սույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝«Քրեական դատավարության ընթացքում ոչ ոք չպետք է ենթարկվի իր արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի, պահվի ստորացուցիչ պայմաններում»: Ոստիկանության աշխատակիցները շատ հաճախ հոգեբանական և ֆիզիկական ճնշումներ են գործադրում բերման ենթարկված անձանցից, մեղադրյալներից, կասկածյալներից, ինչպես նաև դատավարական կարգավիճակ չունեցող անձանցից ցուցմունքներ ստանալու նպատակով, որն էլ հանգեցնում է խոշտանգումներից և
անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունքի խախտմանը: Իրականում վերը նշված իրավունքը խախտվում է ավելի հաճախ, սակայն քաղաքացիները բարձրաձայնել դրա մասին չեն ցանկանում՝ վախենալով հնարավոր ճնշումներից և հետապնդումներից:
Որպես կանոն խոշտանգումների դեպքերով կազմակերպության կողմից ներկայացվում են հանցագործության մասին հաղորդումներ, որոնցով ՀՀ-ում արդյունքի չհասնելու դեպքում կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտման հիմքով կազմակերպությունը դիմում է ներկայացնում Մարդու իրավունքների եվրոպական դատարան:

Անօրինական խուզարկության դեպքեր

Գործ 1. 2011 թ.

Իրավունքի խախտման նկարագրությունը

Կազմակերպություն դիմած քաղաքացի Վ.Ս.-ն հայտնել է, որ Նոյեմբերյանի պետավտոտեսչության աշխատակիցները կանգնեցրել են իր կողմից վարվող ավտոմեքենան և առանց համապատասխան որոշման խուզարկել այն: Խուզարկություն կատարելուց հետո խուզարկության արձանագրություն կամ որոշում անձին չի տրամադրվել:

Ձեռնարկված միջոցառումներ

Կազմակերպության կողմից հանցագործության մասին հաղորդում է ներկայացվել ՀՀ հատուկ քննչական ծառայություն: Կազմակերպության հանցագործության մասին հաղորդումն ուղարկվել է ոստիկանության ներքին անվտանգության ծառայություն, որտեղ կատարվել է ծառայողական քննություն: Ծառայողական քննության համաձայն՝ ոստիկանության աշխատակիցների գործողություններում հանցագործության հատկանիշներ չեն եղել: Կազմակերպության կողմից տեղեկատվության հարցում է ուղարկվել ՀՀ ոստիկանության ներքին անվտանգության վարչություն ստանալու ծառայողական քննության նյութերը:

Կազմակերպության հանցագործության մասին հաղորդման վերաբերյալ կատարված ծառայողական քննության արդյունքում ոստիկանության աշխատակիցների գործողություններում որևէ խախտում չի հայտնաբերվել:

Գործ 2. 2012 թ.

Իրավունքի խախտման նկարագրությունը

2012 թ. փետրվարի 1-ին կազմակերպություն է դիմել Ստեփանավան քաղաքի բնակիչ Ա. Թ.-ն, ով կազմակերպությանն ուղղված դիմումով հայտնել է, որ 2012 թ. հունվարի 18-ին՝ առավոտյան ժամը 10:00-ին, Ստեփանավանի ոստիկանության աշխատակիցները դատարանի որոշմամբ խուզարկել են իր բնակարանը՝ փնտրելով գողացված ապրանքներ: Սակայն խուզարկության ընթացքում բնակարանից շատ բացահայտ տեղից գտել են թղթով փաթաթված մի զանգված, որը ոստիկանների կողմից վերցվել է փորձաքննության ուղարկելու համար, որպեսզի պարզեն բաղադրությունը: Նույն օրը՝ ոստիկանության աշխատակիցների գնալուց 2 ժամ հետո, Ա. Թ.-ն կանչվել է ոստիկանություն ցուցմունքներ տալու նպատակով, որտեղ նրան ասել են, որ «թմրանյութը» կարող է Ազգային անվտանգության ծառայությունում աշխատող որդունը լինել, որի պատճառով նա կարող է խնդիրներ ունենալ, և Ա. Թ.-ն ստիպված ասել է, որ զանգվածը ինքն է հավաքել և չորացրել մոտ 7-8 ամիս առաջ, ապա տուն բերելով՝ դրա գոյության մասին մոռացել է: Հարցաքննությունից հետո քննիչը վերցրել է անձնագիրը: Նշանակվել է փորձաքննություն, որի արդյունքում նրա արյան մեջ թմրանյութի պարունակություն չի հայտնաբերվել: Բնակարանում խուզարկությունը կատարվել է ընթերակաների մասնակցությամբ: Խուզարկությունից հետո, սահմանված կարգի համաձայն, նրանց տրամադրվել է խուզարկության արձանագրության օրինակը: Քաղաքացին խնդիրը ներկայացնելուց և համապատասխան իրավական աջակցություն ստանալուց հետո չի ցանկացել բողոքարկել ոստիկանության աշխատակիցների գործողությունները:

Գործ 3. 2012 թ.

Իրավունքի խախտման նկարագրությունը

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի ստացած հավաստի տեղեկությունների համաձայն՝ 2012 թ. սեպտեմբերի 25-ին և 26-ին համատարած խուզարկություններ են իրականացվել Վանաձոր քաղաքի բնակիչների բնակարաններում: Բնակիչների մեծ մասը, խուսափելով հնարավոր հետապնդումներից, վախեցել է բարձրաձայնել այդ փաստերի մասին: Քաղաքացիներից միայն Վանաձոր քաղաքի ավագանու անդամ Արմեն Այվազյանն է բարձրաձայնել փաստի մասին: Հերթական անգամ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանը, խորամուխ չլինելով խուզարկությունների վերաբերյալ

միջորդությունների հիմնավորվածությանը, հաստատելով դրանք, նպաստել է ոստիկանության կողմից քրեական գործով առնչություն չունեցող քաղաքացիների բնակարանները խուզարկելուն:

Հերթական անգամ ոստիկանությունը կիրառել է «խուզարկություն օպերացիան» իր տեսակետից «անբարեհույս» քաղաքացիներին հետապնդելու, վախեցնելու, ահաբեկելու նպատակով: Ե՛վ դատարանի, և՛ ոստիկանության կողմից նման գործելաոճը չի կարող նպաստել իրենց նկատմամբ քաղաքացիների վստահության բարձրացմանը, ավելին՝ հանգեցնում է իրավական համակարգի արժեզրկմանը:

Ձեռնարկված միջոցառումները

Կազմակերպության կողմից տեղեկատվության հարցումներ է կատարվել ՀՀ Լոռու մարզի քննչական բաժին և ՀՀ դատական դեպարտամենտ պարզելու համար, թե վերը նշված ժամանակահատվածում քանի միջնորդություն է ներկայացվել Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան խուզարկություն իրականացնելու և քանի որոշում է կայացվել դրանց առնչությամբ: Ստացված թվերի միջև անհամապատասխանություն կա. ՀՀ դատական դեպարտամենտի տրամադրած տվյալների համաձայն՝ 28 խուզարկության որոշում է կայացվել դատարանի կողմից, իսկ Լոռու մարզի քննչական բաժնի տվյալների համաձայն՝ 9, ինչն էլ վկայում է այն մասին, որ խուզարկությունների մեծ մասը կատարվել է անօրինական: Չնայած այն հանգամանքին, որ խուզարկությունների վերաբերյալ կայացվել են որոշումներ, այնուամենայնիվ քննչական բաժինը, թվերը թաքցնելով, ևս մեկ անգամ ապացուցում է, որ համատարած խուզարկությունները օգտագործվում են որպես ճնշման գործիք, ընդ որում դրանք կատարվում են քրեական դատավարության օրենսգրքի իմաստով դատավարական կարգավիճակ չունեցող անձանց բնակարաններում:

Գործ 4. 2013 թ.

Իրավունքի խախտման նկարագրությունը

Իր իրավունքների պաշտպանության համար կազմակեպություն է դիմել Ա. Կ.-ն: Նրա ներկայացմամբ խնդիրը կայանում է հետևյալում՝ սույն թվականի մարտի 9-ին ոստիկանության աշխատակիցները խուզարկություն են կատարել քաղաքացու բնակարանում, որի արդյունքում առգրավել են 2 ոսկյա մատանի և 21 հուշանվեր, ինչպես անօրինական կարգով առգրավել են Ա. Կ.-ի անձնագիրը:

Ձեռնարկված միջոցառումները

Կազմակերպության կողմից տեղեկատվության հարցում է կատարվել ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Լոռու մարզի քննչական բաժին՝ ստանալու՝ ինչ իրավական հիմքով է վերցվել Ա. Կ.-ի անձնագիրը և նրա ընտանիքին պատկանող վերը նշված գույքը, որ իրավական ակտով է կարգավորվում գործով վկայից անձնագիր և նրա ընտանիքից գույք վերցնելը, երբ է վերադարձվելու Ա. Կ.-ի անձնագիրը և վերը նշված գույքը:

Գործ 5. 2013 թ.

Իրավունքի խախտման նկարագրությունը

2013 թ. փետրվարի 13-ի առավոտյան 7:30-ին ոստիկանության աշխատակիցները միաժամանակ խուզարկություն են իրականացրել 5 բնակարաններում՝ Ն.Ս.-ի, նրա հոր, Ա.-ի, Ս.-ի և Գ.-ի: Խուզարկությունից հետո նրանցից չորսին՝Ն. Ս.-ին, Ս.-ին, Ա.-ին և Գ.-ին, բերման են ենթարկել: Նույն օրը՝ ժամը 11:30-ին, Ս.-ի բնակարանից բերման են ենթարկել նաև նրա 2 ընկերներին, որոնց ոստիկանության Շենգավիթի բաժանմունքում պահել են 13 ժամ, իսկ մյուսներին՝ 2 օր: Ս.-ի բնակարանում ոստիկանության 3 աշխատակիցներ մնացել են առավոտյան ժամը 7:30-ից մինչև գիշերը ժամը 01:00-ն (սակայն արձանագրության մեջ գրված է եղել 20:00): Այդ ընթացքում Ս.-ին մեկ անգամ բերել են տուն նորից խուզարկություն իրականացնելու համար, որից հետո նորից տարել են ոստիկանություն: Երկրորդ անգամ Ս.-ի բնակարանում խուզարկություն կատարելու ժամանակ ոստիկանության աշխատակիցներն իրենց հետ տարել են նաև խուզարկության թույլտվության թղթերը: Միայն Ն.-ին են ձերբակալել, իսկ մյուսները ազատության մեջ են: Ոստիկանության բաժին բերման են ենթարկել նաև Ն.-ի հղի կնոջը, որտեղ նրան պահել են մոտ 1 ժամ: Տղաներին ոստիկանության բաժին բերման ենթարկելու ժամանակ ոստիկանությունում է եղել նաև Երևան քաղաքի ոստիկանության պետ Ներսիկ Նազարյանը: Ն.-ն մեղադրվում է սպանության և գողության մեջ (փոխանակման կետի աշխատակիցը վիրավորվել է, կոմայից դուրս գալուց հետո նկարագրել է իր վրա կրակողին, որը շատ նման է եղել Ն.-ին, այնուհետև մահացել է): Մինչև մահանալը աշխատակիցը նշել է նաև, որ փոխանակման կետի տեսախցիկները տուն գնալու ժամանակ անջատել է:

Գործ 6. 2013 թ.

Իրավունքի խախտման նկարագրությունը

2013 թ. մարտի 29-ին իր իրավունքների պաշտպանության համար Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ է դիմել Վանաձոր քաղաքի բնակիչ Կ. Ք.-ն:

Կ. Ք.-ի բարձրացրած խնդիրը վերաբերում է ՀՀ ոստիկանության Բազումի բաժնի աշխատակիցների կողմից վերջինիս բնակարանում պարբերաբար անհիմն խուզարկությունների կատարմանը՝ առանց քրեական դատավարության նորմերի պահպանման:

Մասնավորապես Կ. Ք.-ն նշել է, որ վերջին մեկ տարվա ընթացքում իր բնակարանը խուզարկվել է 3 անգամ և ոչ մի անգամ նրա բնակարանից չեն հայտնաբերվել այն իրերը կամ առարկաները, որոնց համար կատարվել է խուզարկությունները: Նա նաև նշել է, որ կատարված խուզարկությունների վերաբերյալ չեն հատկացվել խուզարկություն կատարելու վերաբերյալ արձանագրությունները, ինչպես նաև կատարվել էն խուզարկություններ այն բնակարանում և ավտոտնակներում, որոնք նրա կողմից չեն օգտագործվում և նրան չեն պատկանում:

Չեռնարկված միջոցառումները

2013 թ. ապրիլի 2-ին կազմակերպության կողմից տեղեկատվության հարցում է ուղարկվել ՀՀ ոստիկանության Բազումի բաժին՝ իմանալու՝ Կ. Ք.-ի բնակարանում և հարակից տարածքներում ՀՀ ոստիկանության Բազումի բաժնի կողմից վերջին մեկ տարվա ընթացքում քանի անգամ են կատարվել խուզարկություններ, խուզարկությունների արդյունքում առգրավվել են արդյոք այն իրերը կամ առարկաները, որի համար կատարվել են խուզարկությունները, խուզարկության արդյունքում տրամադրվել է արդյոք խուզարկություն կատարելու մասին արձանագրությունները: Միաժամանակ կազմակերպությունը պահանջ է ներկայացրել տրամադրել Կ. Ք.-ի բնակարաններում և հարակից տարածքներում խուզարկություններ կատարելու վերաբերյալ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի որոշումների և խուզարկություններ կատարելու մասին արձանագրությունների պատճենները: Համաձայն ոստիկանության կողմից տրամադրված տեղեկատվության՝ Կ.Ք.-ի բնակարաններում խուզարկությունները իրականացվել են համապատասխան որոշման հիման վրա:

Տվյալ ոլորտը կարգավորող համապատասխան ներպետական օրենսդրությունը

ՀՀ Սահմանադրության 24-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի բնակարանի անձեռնմխելիության իրավունք: Արգելվում է մարդու կամքին հակառակ մուտք գործել նրա բնակարան, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Բնակարանը կարող է խուզարկվել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝ դատարանի որոշմամբ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 46-րդ կետի 2-րդ պարբերության համաձայն՝ «Բնակարան» հասկացությունն իր մեջ ընդգրկում է նաև մասնավոր

ավտոմեքենան, գետային կամ ծովային նավը, ինչպես նաև ծառայողական անձնական աշխատասենյակը և ավտոմեքենան, արվեստանոցը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝«Ոչ ոք չի կարող քրեական գործով ձերբակալվել, խուզարկվել, կալանավորվել, դատապարտվել, ենթարկվել բերման և դատավարական հարկադրանքի այլ միջոցների, ինչպես նաև իրավունքների ու ազատությունների այլ սահմանափակումների այլ կերպ, քան օրենքով սահմանված հիմքերով և կարգով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 225-րդ հոդվածի համաձայն՝ «1. Քննիչը, բավարար հիմքեր ունենալով ենթադրելու, որ որևէ շենքում կամ այլ տեղ կամ որևէ անձի մոտ գտնվում են հանցագործության գործիքներ, հանցավոր ճանապարհով ձեռք բերված առարկաներ ու արժեքներ, ինչպես նաև այլ առարկաներ և փաստաթղթեր, որոնք կարող են նշանակություն ունենալ գործի համար, խուզարկություն է կատարում դրանք գտնելու և վերցնելու համար: 2. Խուզարկություն կարող է կատարվել նաև հետախուզվող անձանց, հանցագործություն կատարելու մեջ կասկածվող անձանց, ինչպես նաև դիակները հայտնաբերելու համար: 3. Բնակարանի խուզարկությունը կատարվում է միայն դատարանի որոշմամբ»:

Ազատությունից ապօրինի զրկելու դեպքեր

Գործ 1. 2011 թ.

Խախտման նկարագրությունը

Ալավերդի քաղաքի բնակիչ Ս. Ռ.-ն հայտնել է, որ 2011 թ. սեպտեմբերի 6-ին՝ առավոտյան ժամը 10:00-ի սահմաններում, ՀՀ ոստիկանության Թումանյանի բաժնի 3 աշխատակիցներ ոստիկանության բաժին են տարել իր որդուն՝ Ա. Ռ.-ին՝ պատճառաբանելով, թե կալանքից ազատվելուց հետո նա չի ներկայացել ոստիկանության բաժանմունք:

2011 թ. սեպտեմբերի 7-ին՝ ժամը 16:00-ի սահմաններում, անօրինական կարգով ոստիկանության բաժին են տարել նաև Ս. Ռ-ին, որտեղ նրան հայհոյել են, վատ վերաբերվելով հարցեր են տվել նրա որդու մասին՝ ոստիկանությունում պահելով մինչև ժամը 24:00-ն: 24:00-ին նա փախել է ոստիկանությունից, սակայն ճանապարհին ոստիկանները հայհոյելով, քաշքշելով նստեցրել են մեքենան և նորից տեղափոխել ոստիկանություն: Ս.Ռ.-ն գիշերը մեծ դժվարությամբ ոստիկանությունից գնացել է տուն: 2011 թ. սեպտեմբերի 8-ին՝ ժամը 16:00-ի սահմաններում, ոստիկանության աշխատակիցները կրկին Ս.Ռ.-ին տարել են ոստիկանություն հարցաքննության: Երկարատև հարցաքննությունից հետո նա տուն է վերադարձել միայն երեկոյան ժամը 23:00-ին:

2011 թ. սեպտեմբերի 15-ին կազմակերպության կողմից հանցագործության մասին հաղորդում է ներկայացվել ՀՀ գլխավոր դատախազություն:

Կազմակերպության հաղորդումը վերահասցեագրվել և ուղարկվել է Լոռու մարզի քննչական բաժին՝ համապատասխան ընթացք տալու և միացնելու Ս. Ռ.-ի որդու դեմ հարուցված քրեական գործին:

Լոռու մարզի քննչական բաժնից կազմակերպությանը 2011 թ. հոկտեմբերի 11-ին գրությամբ տեղեկացրել են, որ կազմակերպության կողմից ներկայացված փաստերը հերքվել են Ս. Ռ.-ի կողմից: Որից հետո 2011 թ. հոկտեմբերի 21-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Լոռու մարզի քննչական բաժնի Թումանյանի քննչական բաժնից ստացվել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում, համաձայն որի՝ կազմակերպության հաղորդման մեջ նշված դեպքը չի հիմնավորվել, իսկ Ա. Սաքունցը հանցագործության մասին հաղորդումը ներկայացրել է Ս. Ռ.-ի հայտնած տեղեկությունների հիման վրա: Հանցակազմի բացակայության, ինչպես նաև Ա. Սաքունցի և Ս. Ռ.-ի արարքներում հանցակազմ չլինելու հիմքերով քրեական գործի հարուցումը մերժվել է:

Գործ 2. 2011 թ.

Խախտման նկարագրությունը

2011 թ. հոկտեմբերի 6-ին Վանաձոր քաղաքում կատարված դանակահարության համար նույն օրը՝ ժամը 21:30-ի սահմաններում, որպես վկա Վանաձորի ոստիկանության բաժին է տարվել Ա.Ա.-ն, որտեղ պահվել է մինչև գիշերը ժամը 01:00-ն, այնուհետև նրան ոստիկանությունից ազատ են արձակել միայն անձնագիրը ներկայացնելուց հետո՝ պահանջելով հաջորդ օրը՝ առավոտյան ժամը 10:00-ին, ներկայանալ ոստիկանություն: Հաջորդ օրը նա ներկայացել է ոստիկանություն և այնտեղ պահվել մինչև գիշերվա ժամը 01:00-ն: Ա.Ա.-ն, մոտ 15 ժամ մնալով ոստիկանությունում, ենթարկվել է ֆիզիկական և հոգեբանական ճնշումների՝ ցուցմունքներ ստանալու նպատակով: Ոստիկանության աշխատակիցների կողմից չի բացատրվել դատավարական կարգավիճակին համապատասխան իրավունքները և պարտականությունները: Ոստիկանությունից նրան թողել են միայն այն ժամանակ, երբ ծնողը հայտարարել է, որ գնում է ՀՔԱ Վանաձորի գրասենյակ: Ա. Ա.-ի ստացած մարմնական վնասվածքներն արձանագրվել են բժշկական հետազոտության արդյունքում:

Ձեռնարկված միջոցառումները

Կազմակերպության կողմից հանցագործության մասին հաղորդում է ներկայացվել ՀՀ հատուկ քննչական ծառայություն և ՀՀ գլխավոր դատախազություն: Կազմակերպություն դիմած քաղաքացին ոստիկանության աշխատակիցների կողմից գործադրված ճնշումների արդյունքում հրաժարվել է իր՝ կազմակերպությանը տված դիմումներից: Հետագայում ցուցմունքներ է տվել այն մասին, որ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ղեկավարին տվել է սուտ տեղեկություններ՝ վախենալով, որ որդուն հնարավոր է մեղադրեն հանցագործություն կատարելու մեջ: ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Լոռու մարզի քննչական բաժնում քրեական հետապնդում է իրականացվել կազմակերպության նախագահի դեմ, հետագայում կայացվել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում՝ արարքում հանցակազմի բացակայության հիմքով:

Գործ 3. 2012 թ.

Իրավունքի խախտման նկարագրությունը

ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում հասարակական դիտորդների խմբի անդամներ՝ Ավետիք Իշխանյանը, Արթուր Սաքունցը և Արման Դանիելյանը այցելել են «Նուբարաշեն» ՔԿՀ: Այցելության ընթացքում պարզվել է, որ 2010 թ. օգոստոսի 5–ից մինչև սեպտեմբերի 1–ը ՀՀ քաղաքացի Ս.Պ.-ն, առանց օրենքով նախատեսված հիմքերի, պահվել է «Նուբարաշեն» ՔԿՀ-ում:

Ձեռնարկված միջոցառումները

«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության, «Հայաստանի Հելսինկյան կոմիտե» իրավապաշպան ՀԿ-ի և «Քաղաքացիական Հասարակության ինստիտուտ» ՀԿ-ի նախագահների կողմից հանցագործության մասին հաղորդում է ներկայացվել ՀՀ գլխավոր դատախազություն (անձին ակնհայտ ապօրինի կալանավորելու և ակնհայտ ապօրինի կալանքի տակ պահելու) մասին: Քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը բողոքարկվել է վերադասության այնուհետև դատական կարգով: Ընդհանուր իրավասության դատարանը մերժել է ներկայացված դիմումը: Ընդհանուր իրավասության դատարանի որոշումը բողոքարկվել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարան: Վերաքննիչ քրեական դատարանը բավարարել է ներկայացված բողոքը, բեկանել է ընդհանուր իրավասության դատարանի որոշումը և վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցրել՝ վերացնելու անձի իրավունքների ու ազատությունների խախտումները: Դատարանի որոշումը մտել է օրինական ուժի մեջ, սակայն համապատասխան մարմինների կողմից չի կատարվել: Կազմակերպության կողմից ներկայացվել է հանցագործության մասին հաղորդում՝ դատարանի որոշումը չկատարելու հիմքով: Հաղորդման վերաբերյալ որոշում չի կայացվել, ուստի կազմակերպության կողմից դիմում է ներկայացվել դատարան հետևյալ պահանջով՝ ՀՀ գլխավոր դատախազությանը պարտավորեցնել կատարելու վերաքննիչ դատարանի որոշումը: Դատարանի կողմից կայացվել է կազմակերպության դիմումը մերժելու մասին որոշում, որը բողոքարկվել է վերաքննիչ քրեական դատարան, որի կողմից ևս մերժվել է: Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը որոշում է կայացրել, այն մասին, որ տեղի է ունեցել անձի իրավունքների և ազատությունների խախտում և պարտավորեցրել է վերացնելու անձի իրավունքների ու ազատությունների խախտումները, այնուամենայնիվ պետության կողմից քայլեր չեն ձեռնարկվել դատարանի որոշումը կատարելու ուղղությամբ:

Գործ 4. 2012 թ.

Իրավունքի խախտման նկարագրությունը

2012 թ. մարտի 10-ին կազմակերպություն է դիմել Սպիտակ քաղաքի բնակիչ Ռ. Հ.-ն, ով կազմակերպությանն ուղղված դիմումում նշել է, որ 2012 թ. մարտի 7-ին՝ 23:30-ի սահմաններում, իր բնակարան են ներխուժել 4-5 ոստիկաններ, որոնցից մեկը եղել է քաղաքացիական համազգեստով: Մտնելով տուն՝ ոստիկանության աշխատակիցները հրահանգել են Ռ. Հ.-ին, որ վերցնի 3 տարեկան երեխային և մորը, որպեսզի գնան ոստիկանություն: Այն հարցին, թե ինչի համար են գնում, պատասխանել են, որ «երեխայի առևանգման»: Ոստիկանները նրանց բերման են ենթարկել ՀՀ ոստիկանության Սպիտակի բաժին, որտեղից էլ տարել են ՀՀ ոստիկանության Մաշտոցի բաժին, ուր հասել են գիշերը ժամը 02:30-ի սահմաններում: Ոստիկանությունում նրանց սպառնացել են, որ իբր կձերբակալեն երեխային առևանգելու համար: Քննիչը նրանց հետ խոսել է կոպիտ, գռեհիկ տոնով: ՀՀ ոստիկանության Մաշտոցի բաժնում մնացել են մի քանի ժամ: Ոստիկանությունից նրանց թույլատրել են գնալ միայն 3 տարեկան երեխային մորը հանձնելուց հետո:

Ձեռնարկված միջոցառումները

Կազմակերպության կողմից հանցագործության մասին հաղորդում է ուղարկվել ՀՀ գլխավոր դատախազություն՝ Ռ. Հ.-ի նկատմամբ ոստիկանության աշխատակիցների անօրինական գործողությունների վերաբերյալ:

2012 թ. ապրիլի 16-ին ՀՀ հատուկ քննչական ծառայության կողմից կայացվել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում, այն հիմնավորմամբ, որ կազմակերպություն դիմած քաղաքացին իր բացատրությունում նշել է, որ ոստիկանության աշխատակիցներն իր և իր մոր նկատմամբ վատ վերաբերմունք չեն դրսևորել:

Ոստիկանության Սպիտակի և Մաշտոցի բաժնի աշխատակիցների կողմից թույլ են տրվել Ռ. Հ.-ի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենսդրությամբ ամրագրված հիմնական իրավունքների ու ազատությունների խախտումներ, ինչը հիմք է տալիս ենթադրելու, որ նշված բացատրությունը տրվել է ոստիկանության աշխատակիցների ճնշումների արդյունքում:

Անձանց բերման ենթարկելու ընթացքում իրավունքների խախտման դեպքեր

Գործ 1. 2012 թ.

Իրավունքի խախտման նկարագրությունը

Կազմակերպություն դիմած Ն. Ա.-ն հայտնել է, որ սույն թվականի օգոստոսի 17-ին՝ երեկոյան ժամը 23:30-ից մինչև 00:00-ի սահմաններում, բերման է ենթարկվել ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձորի բաժնի քրեական հետախուզության բաժին: Ոստիկանության բաժնում Ն. Ա.-ն ենթարկվել է հոգեբանական ճնշումների, արժանապատվությունը նվաստացնելու նպատակով նրան մի քանի անգամ հարվածել են պարանոցի հատվածում: Ճնշումներ են գործադրվել նաև հանցագործության մասին հաղորդում ներկայացնելուց հետո դրանից հրաժարվելու նպատակով:

Ձեռնարկված միջոցառումները

Կազմակերպության կողմից հանցագործության մասին հաղորդում է ներկայացվել ՀՀ հատուկ քննչական ծառայություն և ՀՀ գլխավոր դատախազություն: ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչի մոտ հոգեբանական և ֆիզիկական ճնշումների ազդեցությամբ գրված բացատրություն տալուց հետո Ն. Ա.-ն, հասկանալով կատարվածը, դիմում է ուղարկել Հատուկ քննչական ծառայություն, որով խնդրել է չեղյալ համարել բացատրությունը և ընթացք տալ հանցագործության մասին հաղորդմանը, քանի որ ինքը ցուցմունքները գրել է հոգեբանական և ֆիզիկական ճնշումների ազդեցության տակ: Հաղորդման հիման վրա կայացվել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում, որոշման հիմքում դրվել է Ն. Ա.-ի ճնշումների ներքո տրված բացատրությունը և անդրադարձ չի կատարվել Ն. Ա.-ի կողմից ներկայացված դիմումին, որով նա խնդրել է հիմք չընդունել բացատրությունը: ՀՀ ՀՔԾ ՀԿԳ քննիչի կողմից կայացվել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում: Որոշումը բողոքարկվել է վերադասության, այնուհետև դատական կարգով: Ընդհանուր իրավասության դատարանը մերժել է կազմակերպության կողմից ներկայացված դիմումը: Որոշումը բողոքարկվել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարան, այնուհետև նաև ՀՀ վճռաբեկ դատարան:

Հաղորդումը ներկայացնելուց հետո Ն. Ա.-ին է մոտեցել ոստիկանության աշխատակից Արամ Ղազարյանը և նրանից ներողություն է խնդրել 2012 թ. օգոստոսի 17-ին ոստիկանության Վանաձորի բաժնում նրա նկատմամբ խմբակային խոշտանգումներ ու հոգեբանական ճնշումներ գործադրելու կապակցությամբ՝ հայտնելով, որ զղջում է իրենց կատարած գործողությունների համար և խնդրել է, որ հետ վերցնի իր կողմից ներկայացված բողոքը: Նույն օրը՝ 2012 թ. օգոստոսի 22-ին, երեկոյան ժամը 20:00-ի սահմաններում, Ն.Ա.-ին զանգահարել է Հատուկ քննչական ծառայության քննիչ Գ. Հովակիմյանը և կանչել Լոռու մարզի

դատախազություն: Քննիչի կանչով դատախազություն ներկայանալուց հետո, քննիչի թելադրմամբ Ն. Ա.-ն գրել է բացատրություն այն մասին, որ ինքը բողոք չունի, և ոստիկանությունում իր նկատմամբ հոգեբանական և ֆիզիկական բռնություններ չեն իրականացվել: Այսպիսով, ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձորի բաժնի քրեական հետախուզության բաժնի աշխատակիցների կողմից ոտնահարվել են Ն.Ա.-ի՝ սահմանադրորեն և օրենսդրությամբ ամրագրված մի շարք հիմնարար իրավունքներ և ազատություններ:

Սպառելով ներպետական միջոցները և որևէ արդյունքի չհասնելով՝ 2013 թ. հուլիսի 26-ին կազմակերպության կողմից կոնվենցիայի 3-րդ և 5-րդ հոդվածներով երաշխավորված իրավունքների խախտման հիմքով դիմում է ներկայացվել Մարդու իրավունքների եվրոպական դատարան:

Գործ 2. 2012 թ.

Իրավունքի խախտման նկարագրությունը

2012 թ. օգոստոսի 10-ին կազմակերպություն են դիմել ՀՀ Լոռու մարզի Հարթագյուղ գյուղի բնակիչները: Վերջիններս հայտնել են այն մասին, որ ոստիկանության Սպիտակի, Դիլիջանի և Իջևանի աշխատակիցներն իրենց գյուղի բնակիչներից շատերին անհարկի անհանգստացնում են, մի քանի անգամ բերման են ենթարկել ոստիկանության Սպիտակի, Դիլիջանի և Իջևանի բաժիններ հարցաքննության՝ չներկայացնելով ոստիկանություն բերման ենթարկելու մասին համապատասան որոշում կամ ծանուցագիր: Եղել են դեպքեր, երբ ոստիկանություն են տարել ուշ երեկոյան և նրանք ոստիկանությունում մնացել են մինչև ժամը 02:00-ն: Ոստիկանության աշխատակիցները գյուղացիների հետ խոսել են բարձր տոնով, գոռացել են, ինչպես նաև վիրավորել ու սպառնացել:

Ձեռնարկված միջոցառումները

Կազմակերպության կողմից Հարթագյուղի բնակիչների իրավունքների պաշտպանության համար հանցագործության մասին հաղորդում է ուղարկվել ՀՀ գլխավոր դատախազություն:

Վարույթն իրականացնող մարմնի կողմից կայացվել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում, որը սակայն կազմակերպության կողմից չի բողոքարկվել հիմքերի բացակայության պատճառով:

Տվյալ ոլորտը կարգավորող համապատասխան ներպետական օրենսդրությունը

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 153-րդ հոդվածի համաձայն՝ **«Բերման ենթարկելը առանց հարգելի պատճառի քննության չներկայացող կասկածյալին, մեղադրյալին, ամբաստանյալին, դատապարտյալին, վկային և տուժողին** հարկադրաբար քրեական վարույթն իրականացնող մարմնին ներկայացնելն է՝ նրա նկատմամբ սույն օրենսգրքով նախատեսված համապատասխան դատավարական գործողություններ կատարելու համար, որը կարող է զուգորդվել բերման ենթարկվող անձի իրավունքների և ազատությունների ժամանակավոր սահմանափակմամբ:

Բերման ենթարկելը կատարվում է վարույթն իրականացնող **հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի կամ դատարանի պատճառաբանված որոշման հիման վրա:** Նշանակված ժամկետում կանչով ներկայանալուն խոչընդոտող հարգելի պատճառների առկայության մասին կասկածյալը, մեղադրյալը, ամբաստանյալը, դատապարտյալը, ինչպես նաև վկան և տուժողը պարտավոր են տեղյակ պահել իրենց կանչած մարմնին»: